ԱՍԼ, ա. ծագում.

Մարդն որ սիրելի անես, նա զասլըն մարդուն դու քննէ:

Սարեր, ձեր արեւն ասեմ, ասլըն ի՞նչ է, է՞ր էք տրտմեր:

ԱՍՏԱՌ, պ. ասթէր, doubiure:

ԱՍՏՂՈՒՆԱՔ, մ. հ. , աստղեր:

ԱՍՏՆԻՈՐ, ԱՍՏՆՎՈՐ, ԱՍՏԸՎՈՐ, մ. հ., այս աշխարհը, մեր աշխարհը, ici -bas:

ԱՏԱՎԱԹ, մ. հ. , ա. էտավաթ, կռիւի գործիք. կռիւ: Դու այլ ատավաթ կ'անես, գիտես թէ հետ քեզ խըռով եմ:

ԱՐԱԽ, ԱՅԱԽ, մ. հ., ա. արաք, օղի:

ԱՐԵՒԷՆ ՀԱՆԵԼԷ, մ. հ., մեռցնել:

ԱՐՁ, ա. յայտնել, յայտարարել:

ԱՐՄԱՂԱՆ, ԱՐՄՈՒՂԱՆ, պ. էրմէղան, ընծայ:

ԱՐՄՆՆԱԼ, Ա. բ. զարմանալ:

ԱՐՔԱՅՀԱՒ, մ. հ., ըստ Նորայր Բիւզանդացիի, պապկայ, թութակ՝ ղեղին ու կանանչ փետուրընեռով եւ կարմիր կուրծքով:

ԱՒԵԼ, ԷՎԷԼ, Ա. բ. աւելի:

ԱՒՏԱԼԷ, Ա. բ. հաւատալ:

ԱՒՕՏ ՉԱՒՕՏ (մնալ) մ. հ. , աւատ չաւատ, Ա. բ. ապշած, շուարած մնալ:

ԱՔԵՍՏԷ, տես Ագեստէ:

Բ .

ԲԱՁԸՐԿԱՆ, տես եւ ՊԱՁԻՐԿԵԱՆ, ՊԷՁԻՐԿԵԱՆ, պ. պազարկեան, վաճառական:

ԲԱԺԳՈՂ (անցնիլ), մ. հ. , առանց կամուրջին անցքի վճարքը (բաժը, pe'age) վճարելու անցնիլ:

ԲԱԼԻՆՔ, մ. հ., բանալի:

ԲԱԼԼԻՔ , տես ԲԱԼԻՆՔ:

ԲԱԼՆԻ, ԲԱԼՆԻՔ, տես ԲԱԼԻՆՔ:

ԲԱՂՉԷ, պ. պաղչէ, պարտէզ:

ԲԱՐՉԱՄ, պ. փերջեմ, մազի փունջ, փնջիկ (me'che):

ԲԵՀԵՇՏԻ, պ. պեհիշթի, դրախտային:

ԲԸՐԸՇԱԿ, մ. հ., Երկու թուխ ու մէկ բարակ կու կենան ի մէկ բըրըշակ. թերեւս դասական հայերէնի պրշակ բառն է, որուն իմաստն է՝ ձեղուն, ձեղնայարկ:

ԲԸՌԵԼ, Ա. բ., փնտռել:

ԲՈՒԽՏԱՆԵ, Ա. բ., Առաջ ըզլելուն ուտենք որ ասել շատ մարդու բուխտան. չարախօսութիւն. ա. պուղտ (ոխ, ատելութիւն) բառէն:

ԲՈՒՆԻԱԹ, ա. պունիաթ, շէնք, շինութիւն: